ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"24" օգոստոսի 2011թ. № 88 -Ա

«ՏԱՆՁԱՏԱՓԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա) ենթակետով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ 728 հրամանագրի 1.6 և 1.16 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով Ս.Աբրահամյանի անձնական դիմումը,**կ ա ր գ ա դ ր ու մ ե մ՝**

1.2011թ. օգոստոսի 25-ից Սավադ Աբրահամյանին ազատել «Տանձատափի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի պարտականություններից:

2.2011թ. օգոստոսի 25-ից Վիլեն Աբրահամյանին նշանակել «Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի պաշտոնի համար մրցույթի անցկացումն ու նշանակումը:

Հիմք՝ Վ. Աբրահամյանի անձնական դիմումը:

3.Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում, հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Զաքարյան Համլետ	Մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ,հանձնաժողովի նախագահ
Այվազյան Վովա	Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Գևորգյան Վաչե	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի 1-ին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ
Վիլեն Աբրահամյան	տնօրենի պաշտոնակատար (ընդունող)
Սավադ Աբրահամյան	նախկին տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (հանձնող)

4.Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և ներկայացնել արդյունքները:

5.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2011թ. օգոստոսի 24
ք. Կապան